ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքականության կրթաթոշակներ ծրագիր 2018

Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանը (ԲՀՀՀ) աշխատում է Հայաստանում սեփական քաղաքացիների առջև պատասխանատու, ժողովրդավար, հաշվետու կառավարություն ունենալու և կենսունակ ու հանդուրժող հանրություն կառուցելու ուղղությամբ: ԲՀՀՀ-ի ուշադրության կենտրոնում են մարդու իրավունքների, կառավարման թափանցիկության, արդարադատության հասանելիության, քաղաքացիական հասարակության սատարման և սոցիալական ներառման հարցերը:
Բաց և բազմակարծիք հանրության մարտահրավերներին արագ արձագանքելու, ինչպես նաև իրավասու և ուժեղ քաղաքացիական հասարակություն ձևավորելու միտումով՝ ԲՀՀՀ հայտարարում է անհատական դրամաշնորհների մրցույթ 2018թ. քաղաքականության կրթաթոշակներ (policy fellowship) ծրագրի շրջանակում: Ծրագիրն ուղղված է աջակցելու այն հետազոտողներին, ովքեր պատրաստակամ են իրականացնել ուսումնասիրություններ՝ բացահայտելու բաց հասարակության առջև ծառացած առավել վճռորոշ մարտահրավերները, մշակելու կիրառական լուծումներ, և գործուն քայլեր ձեռնարկել ուսումնասիրությունը լսելի դարձնելու ուղղությամբ՝ այսպիսով առավելագույնի հասցնելով ուսումնասիրության ազդեցությունը: Կրթաթոշակը նպատակ ունի զարգացնել հետազոտողների՝ հանրային քաղաքականության հետազոտության միջոցով հանրային կյանքի տարբեր ոլորտների գործընթացների վրա ազդելու կարողությունները, նպաստել անհատ հետազոտողների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և պետական մարմինների միջև ակտիվ և առավել որակյալ համագործակցային մշակույթի ձևավորմանը՝ զարգացնելով հանրային քաղաքականության հետազոտության և վերլուծության վրա հիմնված երկխոսությունը:

Ով կարող է դիմել

Ծրագիրը բաց է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, համալսարանների դասախոսների, հանրային քաղաքականության ոլորտի հետազոտողների, վերլուծաբանների, փորձագետների և խորհրդատուների համար: Անհրաժեշտ է ունենալ նվազագույնը մագիստրոսական կրթություն հանրային կառավարման, քաղաքականության, քաղաքագիտության կամ սոցիալական այլ գիտությունների՝ իրավագիտության, տնտեսագիտության, միջազգային հարաբերությունների կամ համանման բնագավառներում: Հանրային քաղաքականության վերլուծության, ինչպես նաև շահերի պաշտպանություն իրականացնելու փորձը ցանկալի է, հետազոտական աշխատանքների համար անհրաժեշտ գրավոր հմտությունների առկայությունը՝ խիստ գերադասելի: Դիմորդները պարտավոր են էական ժամանակ հատկացնել առավելագույնը հինգ ամիս տևող նախագծի իրականացմանը: Դիմում-հայտերը ընդունվում են միայն անհատների կողմից:

Ակնկալվող արդյունքներ

Դիմորդներից ակնկալվում է Հայաստանի առջև ծառացած մարտահրավերների[1] շրջանակում կոնկրետ խնդիրների բացահայտում և ձևակերպում, քաղաքականության հետազոտության իրականացում և հանրային դիսկուրսի խթանում՝ հանրային կյանքի տարբեր ոլորտների քաղաքականության խնդիրները կամ մտահոգությունները լսելի դարձնելով և դրանց համար լուծումներ առաջարկելով:

Կրթաթոշակառուներից ակնկալվում է փաստարկների վրա հիմնված խնդիրների և բարեփոխումների հարցադրումներ ձևակերպել՝ կիրառել համապատասխան մեթոդաբանական գործիքներ և ապացույցների վրա հիմնված եզրակացություններ ձևակերպել: Կրթաթոշակառուները պետք է ներկայացնեն կառուցվածքային հաշվետվություն՝ քաղաքականության վերլուծության (10,000 բառի սահմաններում) և հակիրճ առաջարկություններով քաղաքականության վերլուծության համառոտագրի (policy brief) տեսքով:

Հանրային դիսկուրսի խթանումը կարևորվում է որոշումների կայացման գործընթացների վրա արդյունավետ ազդեցություն ունենալով: Կրթաթոշակառուները պետք է ժամանակ տրամադրեն իրենց հետազոտությունը ճանաչելի դարձնելու նպատակով: Ցանկալի է, որ կրթաթոշակառուները կազմեն և հետևեն քաղաքականության խնդիրը կամ մտահոգությունը ճանաչելի դարձնելու գործողություններ, ներառյալ հանդիպումներ և քննարկումներ տվյալ ոլորտի պատասխանատուների, որոշում կայացնողների հետ, հանրային քննարկումներ, նույնպես հանրային հաղորդակցման տարբեր ձևաչափերում նեգրավվածություն՝ տվյալ քաղաքականության խնդրի վերաբերյալ տեղեկացված լինելու միտումով:

Դիմում-հայտերի ընթացակարգ

Դիմորդները պետք է լրացնեն իրենց կողմից առաջարկվող ծրագրի ներկայացման և գնահատման համար նախատեսված *քաղաքականության կրթաթոշակներ 2018 ծրագրի* դիմում-հայտի ձևը:[2] Բոլոր դիմորդները կտեղեկացվեն մրցույթի արդյունքների մասին՝ հայտը ներկայացնելու վերջնաժամկետից երեք շաբաթվա ընթացքում: Առաջին փուլը անցած դիմորդները կհրավիրվեն հարցազրույցի:

Բյուջե

Կրթաթոշակառուները կստանան անհատական դրամաշնորհներ մինչև $3,000 (ԱՄՆ դոլար) հետազոտության վերաբերյալ ծախսերը հոգալու նպատակով:

---

[1] Դիմորդները կարող են ձևակերպել խնդիրներ՝ հիմնվելով, բայց չսահմանափակվելով, Հավելված 1-ում (էջ 4) առաջարկվող *քաղաքականության կրթաթոշակներ 2018 ծրագրի* թեմաների և խնդիրների շուրջ:

[2] Դիմում-հայտի ձևը տե՛ս Հավելված 2-ում (էջ 8):

Դասընթացներ և քննարկումներ

ԲՀՀՀ-ը նաև աջակցում է կրթաթոշակառուների քաղաքականության վերլուծության կարողությունների զարգացմանը: Բոլոր կրթաթոշակառուները պետք է մասնակցեն ԲՀՀՀ-ի կողմից կազմակերպվող սեմինարին՝ քաղաքականության վերլուծության կարևորության, խնդիրների ձևակերպման, հետազոտական մեթոդաբանության, ինչպես նաև քաղաքականության որոշումների փոփոխության և ջատագովության հաջողակ փորձերի վերաբերյալ: Կրթաթոշակառուներից ակնկալվում է իրենց փորձառության ներդնում և ակտիվ մասնակցություն ԲՀՀՀ-ի և այլ քաղհասարակության կազմակերպությունների կողմից պարբերաբար կազմակերպվող քաղաքականության քննարկումներին և հանդիպումներին:

Դիմումների ներկայացում

Հետաքրքրված անձիք պետք է ներկայացնեն իրենց հետազոտության առաջարկների դիմում-հայտերը (տես կից հավելված 2-ը), ռեզյումե (պարտադիր) և նախկինում իրականացրած հետազոտության նմուշ կամ հղում (ցանկալի) հետևյալ էլ. հասցեին register@osi.am մինչև 2018թ.՝

Հոկտեմբերի 8-ը, ժամը 17.00

Դիմումները ներկայացվում են էլեկտրոնային տեսքով: Դիմումը ուղարկելուց հետո, մինչև երկու աշխատանքային օրերի ընթացքում դիմորդները կստանան հաստատող նամակ դիմումի ստացման վերաբերյալ -- այն չստանալու դեպքում, խնդրում ենք կապ հաստատել մեզ հետ: Հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել քաղաքականության կրթաթոշակներ ծրագրի համակարգող Վալենտինա Գևորգյանին. էլ.հասցե՝ valentina@osi.am կամ հեռ. (010) 53-38-62, 53-67-58:

Մրցույթի հետ կապված հարցերի պարզաբանմանը նվիրված հանդիպումը տեղի կունենա ս.թ. *հոկտեմբերի 01–ին, ժամը 17.00* Գրանդ հոթել Երևան հյուրանոցի Վիվալդի սրահում, հասցե՝ Աբովյան 14

Քաղաքականության կրթաթոշակներ ծրագիր 2018
Մրցույթի հայտարարություն
Հավելված 1 Հետազոտման առաջարկվող թեմատիկ բնագավառներ

Արդարադատության համակարգ

Դեպի ժողովրդավարություն այս անցումային շրջանում Հայաստանը բարձր է գնահատում բարեփոխումների իրականացումը, նպատակ ունենալով ամրապնդել դատական համակարգի անկախությունն ու անաչառությունը՝ որպես քաղաքացիների սահմանադրական իրավունքների պաշտպանության հիմնարար սկզբունք: Ժողովրդավարական հասարակություններում դատական համակարգը հանդիսանում է տվյալ երկրում օրենքի գերակայության ցուցանիշ: Չնայած Հայաստանի որդեգրած նոր քաղաքական ուղուն, երկրում դեռևս առկա են մի շարք մարտահրավերներ: Դիմորդները կարող են գնահատել դատական համակարգի գործունեությունը, քրեական արդարադատության ոլորտի բարեփոխման հեռանկարները, բացահայտել ու վերլուծել մարդու իրավունքների խախտումներին հանգեցրած անարդարության արմատական պատճառները, հետազոտել մարդու իրավունքների խախտումների ու չարաշահումների կրկնվող պրակտիկայի կանխարգելման մեխանիզմներ, բացահայտել մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմներ պետական անվտանգության համատեքստում և այլն: Դիմորդները կարող են հետազոտություններ առաջարկել, որոնք կվերլուծեն անցումային փուլում արդարադատության իրականացման միջազգային փորձը: Ակնկալվում է, որ հետազոտողները իրականացնեն ապացույցների վրա հիմնված ուսումնասիրություն և նպաստեն բարեփոխումների օրակարգի մշակմանը, աջակցելով դեպի ժողովրդավարություն երկրի արդյունավետ ու սահուն անցմանը՝ քաղաքականության առաջարկությունների միջոցով:

Կառավարման հաշվետվողականություն, թափանցիկություն և կոռուպցիայի կանխարգելում

Հայաստանի քաղաքական ուղու փոփոխությունից հետո, թափանցիկ ու հաշվետու կառավարչություն ձևավորելու նպատակով՝ կոռուպցիայի դեմ պայքարը հանդիսանում է նոր կառավարության առաջնահերթ քաղաքականություններից մեկը: Անհրաժեշտ է, որ Հայաստանը բազմակողմանի հանձնառություններ առնի հակակոռուպցիոն մեխանիզմների կիրառման համար: Բոլոր մակարդակներում կոռուպցիայի դեմ պայքարելու նոր կառավարության վճռական մոտեցումը պահանջում է տարբեր ոլորտներում ստանձնած պարտավորությունների մանրամասն ուսումնասիրություն: Դիմորդները կարող են հետազոտություններ մշակել, որոնք ուղղված կլինեն շարունակական անարդարության պատճառների վերհանմանն ու հակակոռուպցիոն բարեփոխումների օրակարգի մշակման ու իրականացման գործընթացների աջակցմանը: Դիմորդները կարող են ուսումնասիրել հակակոռուպցիոն մարմինը, պետական գնումների համակարգը, միջոցների հայտարարագրման ու իրական սեփականատերերի վերաբերյալ կարգավորումները: Օրինակ, դիմորդները կարող են՝ բացահայտել քաղաքական անցումային շրջանում կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային լավագույն փորձեր, մշակել միջոցառումներ ու ցուցանիշներ՝ հակակոռուպցիոն ռազմավարության և գործողությունների ծրագրի իրականացման գնահատման համար, վերլուծել Հայաստանի առաջընթացը՝ GRECO, GSP+, OECD, UNCAC-ի շրջանակներում միջազգային հակակոռուպցիոն պարտավորությունների իրականացման ուղղությամբ և գնահատել EITI-ի արդյունավետությունն ու ազդեցությունը: Հետազոտության առանձին առարկա կարող են հանդիսանալ նաև կոռուպցիայի դեմ պայքարին կոչված քաղաքականությունների գործառնության վերլուծություններ, ներառյալ՝ ապօրինի հարստացման քրեականացումը, շահերի բախման դեմ պայքարի կարգավորումները, ազդարարի ինստիտուտի ներդնման և այլ ոլորտների օրենսդրական լուծումները և այլն:

Հանրակրթություն և բարձրագույն կրթություն

Հայաստանի դեպի ժողովրդավարություն այս անցումային շրջանում նոր կառավարությունը հավատարիմ է կրթության բնագավառում իրական բարեփոխումների իրականացմանը՝ ոլորտի վերականգնման նպատակով: Չնայած նախկինում բազմաթիվ միջամտություններին ու զգալի դոնորական աջակցությանը, կրթության ոլորտում մարդու իրավունքների, որակի, բարեվարքության, սոցիալական արդարության ու մասնակցության խնդիրները շարունակում են մնալ մարտահրավերներ: Անհրաժեշտ է ապաքաղաքականացնել որոլտը, հաստատել որակի ապահովման մեխանիզմներ, և ապահովել ներառական ու իրավահավասար քաղաքականություն՝ բոլորի համար մատչելի, հասանելի և որակյալ կրթություն ապահովելու համար: Դիմորդները կարող են հետազոտություններ ներկայացնել ուղղված հետևյալ խնդիրներին՝ սոցիալական արդարություն (օրինակ՝ ներառականություն ու հակա-խտրականություն, որակյալ կրթության հասանելիություն քաղաքային ու գյուղական համայնքներում, ավագ դպրոցների արդյունավետություն՝ հասանելիության ու որակյալ կրթության տեսանկյունից), ակադեմիական բարեվարքություն և ազատություն (բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարության ու ակադեմիական անկախության հիմնախնդիրները բարձրագույն կրթության շարունակական բարեփոխումների համատեքստում, գրագողություն և այլն), բարձրագույն կրթության արտաքին և ներքին որակի ապահովման մեխանիզմների որակի և ամբողջականության խնդիրներ, հանրակրթության դասագրքեր, ծնողների և այլ խորհուրդների դերը հաշվետվողականության ու կրթության որակի ապահովման գործում, գիտությունն ու հետազոտությունը բարձրագույն կրթության ոլորտի համատեքստում, գիտական որակավորման գործընթաց, կրթության էլիտարացում, կրթության որակի գնահատման չափորոշիչ մեթոդներ ու ցուցանիշներ, հանրակրթության անվճար համակարգերի քաղաքականության ու իրականության գնահատում, կրթության որակի ու արժեքի նկատմամբ հանրային ընկալումներ, հանրակրթության օպտիմալացումը համայնքային համախմբման, ինչպես նաև ազգային անվտանգության համատեքստում: Լրացուցիչ, հետազոտական աշխատանքները կարող են ներառել ֆինանսական ու կրթական քաղաքականությունների վերանայում՝ բարեվարքության ու համակարգի արդյունավետության տեսանկյունից, մշակել հանրապետության ամբողջ տարածքում տարբեր ծագում ու նախադրյալներ ունեցող աշակերտների համար կրթության մատչելիության չափորոշիչներ: Դիմորդները խրախուսվում եմ ներկայացնել հետազոտություններ, որոնք կաջակցեն կամ կլրացնեն ընթացիկ բարեփոխումների վերաբերյալ որոշումների կայացման գործընթացները:

Հայաստանի Թավշյա հեղափոխությունը և հաջորդ քայլերը

2018թ. ապրիլին Հայաստանն աննախադեպ համախմբման, համընդհանուր ընդվզման ականատես եղավ, ընդվզում, որը հայտնի դարձավ որպես Թավշյա հեղափոխություն: Երկրի քաղաքական ուղին փոխվեց, և ժողովրդավարական սկզբունքների ու արժեքների վրա հիմնված նոր ու որակյալ կառավարման համակարգ ունենալու քաղաքացիների հույսերը մեծացան: Հաշվի առնելով բարեփոխումների հրատապությունը, ներկայիս քաղաքական օրակարգը զարգանում է ռազմավարական առաջնահերթությունների շուրջ, որոնք համապարփակ բարեփոխումների գործընթացի հիմք են հանդիսանում: Դիմորդները կարող են ներկայացնել քաղաքականության օրակարգային հարցերի վերաբերյալ հետազոտություններ, ինչպես նաև հետազոտական հարցեր ձևակերպել անմիջական կարևորություն ունեցող խնդիրների վերաբերյալ՝ բարեփոխումների գործընթացներն աջակցելու համար: Հետազոտությունները կարող են ուղղված լինել պետական մարմինների ու քաղհասարակության միջև համագործակցության կամ փոխաջակցության նոր ձևաչափերի բացահայտմանը կամ մշակմանը: Դիմորդները նաև կարող են իրականացնել նախկին և ներկա կառավարությունների կողմից հռչակված արժեքների, քաղաքականությունների, պրակտիկայի ու բյուջետային կատարման համեմատական վերլուծություններ, ինչպես նաև բացահայտել համայնքներում տեղական մասնակցության և քաղաքականության մշակման մեջ խոցելի խմբերի ներգրավման հնարավորություններ, ուսումնասիրել քաղաքական մշակույթի փոփոխությունները, հանրային ընկալումներն ու ակնկալիքները ներկայիս զարգացումների վերաբերյալ և այլն: Ակնկալվում է, որ դիմորդները ձևակերպեն թիրախավորված առաջարկություններ բարեփոխումներին աջակցություն ցուցաբերելու նպատակով:

Սոցիալական արդարություն

ՀՀ Սահմանադրության համաձայն Հայաստանը սոցիալական պետություն է, որը նաև ստանձնել է սոցիալական երաշխիքներ ապահովելու պարտականություններ՝ Եվրոպայի խորհրդին անդամակցության արդյունքում: Ռեսուրսների հավասար բաշխումը և արդարացի վերաբերմունքը տարբեր սոցիալական խմբերի նկատմամբ հանդիսանում են կարևոր ցուցանիշներ՝ երկրների զարգացման մակարդակին ընդառաջ: Հավատարիմ մնալով հավասարությանն ու արդարությանը՝ թե՛ քաղաքականության մակարդակում և թե՛ գործնական աշխատանքում, դիմորդները կարող են հետազոտություններ մշակել, որոնք կբացահայտեն թե որքանով տարբեր ոլորտներում իրականացվող բարեփոխումները արտացոլում են սոցիալական արդարության սկզբունքները, հասկանալ, թե արդյոք ընթացող բարեփոխումները համապատասխանում են սահմանադրական կարգի հիմունքներին, օրենքի գերակայության սկզբունքով կառավարվող սոցիալական պետությանը համապատասխանեցված չափանիշներին: Հետազոտական աշխատանքները կարող են ուղղված լինել, բայց չսահմանափակվել, հետևյալ ոլորտներում պետական միջոցների հատկացման ու ներդրման գնահատմանը՝ առողջապահություն, կրթություն, աշխատանք և սոցիալական ապահովություն, աղքատություն և միգրացիա: Դիմորդները կարող են իրականացնել կոռուպցիոն դեպքերի ուսումնասիրություն և դրանց կապը գործազրկության հետ, ուսումնասիրել արդարադատության մատչելիության և խոցելի խմբերի սոցիալական պաշտպանության խնդիրներ, ինչպես նաև տեղական ու ազգային մակարդակներում սոցիալական արդարության հարցերի քաղաքականության և պրակտիկայի վերաբերյալ հարցադրումներ մշակել: Դիմորդները կարող են ուսումնասիրել իրավունքի վրա հիմնված քաղաքականության և վարչական ընթացակարգերը, մշակել սոցիալական արդարության քաղաքականության գնահատման մեթոդաբանություն և հետազոտել սոցիալական արդարության խնդիրների կապը զարգացման ցուցանիշների հետ: Դիմորդները նաև կարող են ուսումնասիրել տարբեր ոլորտներում իրականացվող բարեփոխումների գաղափարախոսությունները, դրանց ներթափանցումն ու արտացոլումը գոյություն ունեցող պատմությթներում ու գործողություններում՝ սոցիալական արդարության տեսանկյունից:

Ապատեղեկատվություն և քարոզչություն

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը հնարավորություն է ստեղծում ու խթանում է հանրային մասնակցության ու ջատագովության կարողությունները: Հայաստանի քաղաքացիները հաջողեցին իրենց կամքն ու մտահոգությունները արտահայտելու գործում, մի զարգացում, որը հանգեցրեց 2018թ. ապրիլյան իրադարձություններին: Այնուամենայնիվ, Թավշյա հեղափոխությունից հետո ազգայնական, խտրական ու կողմնակալ քարոզչությունը վերելք է ապրել առցանց ու սոցիալական լրատվամիջոցներում՝ հանրային տարածքներն ու քաղաքացիական քննարկումները գրավելու նպատակով: Տեղեկատվական վստահելի աղբյուրների ճանաչման կարողությունների պակասը հանդիսանում է լուրջ մարտահրավեր: Ներկա իրավիճակում, երբ Հայաստանի քաղաքական կյանքը գտնվում է հանրային, ինչպես նաև տարբեր տեղական և միջազգային մարմինների ու հաստատությունների ուշադրության կենտրոնում, ճշգրիտ ու անկողմնակալ, ապացույցների վրա հիմնված ուսումնասիրությունները խիստ անհրաժեշտություն են հանդիսանում: Բարելավված հաղորդակցման մեխանիզմները կարևոր են բարեփոխումները ճիշտ կերպով հանրությանը հասցնելու, ինչպես նաև քաղաքացիներին աջակցություն տրամադրելու և կառավարությանը հաշվետու պահելու համար: Դիմորդները կարող են հետազոտել այն ուղիները, ձևերն ու քաղաքական տրամաբանությունը, որոնք միտված են ներխուժելու հանրային տարածքներ՝ օգտագործելով ապատեղեկատվական ու քարոզչական մեխանիզմներ: Դիմորդները կարող են կառավարության և հասարակության միջև հաղորդակցման բարելավմանն ուղղված հետազոտություններ մշակել՝ Հայաստանում ժողովրդավարացման գործընթացների շարունակականությունն ապահովելու միտումով: Ակնկալվում է, որ հետազոտողները մշակեն ապացույցներ, որոնք կօգնեն զարգացնել ու պահպանել առողջ և քարոզչությանը հեշտ չտրվող հանրային տարածքներ:

ԵՄ ինտեգրումն ու Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը

2017թ. նոյեմբերին Հայաստանն ու ԵՄ-ն ստորագրեցին Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ), որը սահմանում է համապարփակ բարեփոխումների օրակարգ: Հայաստանի այս անցումային ժամանակաշրջանում կարևոր է, որ քաղհասարակությունն աջակցի ներքին բարեփոխումների գործընթացներին, այս դեպքում՝ Համաձայնագրի պատշաճ իրականացմանն ուղղված վերահսկողության ու ջատագովության միջոցով: Համաձայնագրով նախատեսված ոլորտային բարեփոխումները պետք է իրականացվեն քաղաքականության և քաղաքացիական հասարակության համայնքի հետ սերտ համագործակցությամբ: Նպաստելով բարեփոխումների տարբեր ոլորտներում քաղաքականության կարողությունների զարգացմանը, դիմորդները կարող են մշակել կառավարության գերակայություններն ու Համաձայնագրի օրակարգը փոխլրացնող խնդիրների վերաբերյալ հետազոտություններ, որոնք կարող են ներառել, բայց չսահմանափակվել, հետևյալ գործողություններով՝ մշակել տարբեր ոլորտներում ՀԸԳՀ-ի ազդեցության գնահատման, մեթոդաբանական մոդել, գնահատել քաղհասարակության մասնակցությունը Համաձայնագրի իրականացման վերահսկման գործընթացում, գնահատել մարդու իրավունքների և Հայաստանի կողմից ստորագրված (և ՀԸԳՀ-ում հղում կատարած) այլ փաստաթղթերի շրջանակում ստանձնած պարտավորությունների կատարումը, գնահատել Համաձայնագրով սահմանված քաղհասարակության պլատֆորմի և այլ ինստիտուցիոնալ մարմինների կազմակերպումը, կատարողականությունն ու ազդեցությունը, մշակել և իրականացնել տեղական ու միջազգային ջատագովության ռազմավարություններ, մշակել Համաձայնագրի (կամ Հայաստանի կողմից ստորագրած այլ փաստաթղթերի) շրջանակներում քաղաքականության երկխոսության մեջ քաղհասարակության դերի ու մասնակցության նոր գործիքներ ու մեխանիզմներ: Դիմորդները կարող են հետազոտություններ մշակել, բայց չսահմանափակվել, ՀԸԳՀ-ով սահմանված մի շարք որոլտների վերաբերյալ՝ ժողովրդավարական հաստատություններ և հանրային կառավարում, տնտեսական զարգացում ու շուկայական հնարավորություններ, էներգաարդյունավետություն, բնապահպանություն, գյուղատնտեսություն, աշխատանքի ու սոցիալական հարցեր, տրանսպորտ և այլն: Դիմորդները նաև կարող են կատարել Համաձայնագրով և Եվրասիական տնտեսական միության պայմանագրով սահմանված որոշակի ոլորտների համեմատական վերլուծություն: Դիմորդները խրախուսվում են հետազոտական առաջարկություններ ներկայացնել, որոնք ազդեցություն կունենան բարեփոխումների գործընթացների վրա, ինչը կարևորվում է ԵՄ ինտեգրման իրական հնարավորություններով լի այս անցումային շրջանում:

Հավելված 2 Դիմում-հայտի ձև
Քաղաքականության կրթաթոշակներ ծրագիր 2018

Դիմումի նպատակն է հեշտացնել հետազոտական առաջարկների ընդունման գործընթացը և մատնանշել բոլոր այն հիմնական հարցերը, որոնց անհրաժեշտ է պատասխանել: Նշված բառային սահմանափակումները նախատեսվել են որպես հետազոտական առաջարկի մշակման գործընթացը հեշտացնող չափանիշներ, որոնք ակնկալվում է պահպանել: Առաջարկը պետք է ներկայացնել պարզ ու հստակ:

Նախագծի վերնագիր և համառոտ բնութագիր

Առաջարկի համառոտ բնութագիր՝ ի՞նչ եք ուզում ուսումնասիրել, ի՞նչն է Ձեզ դրդել նման հետազոտության իրականացման, որքանո՞վ է Ձեր առաջարկած թեման արդիական և կապված ներկայումս ընթացող որևէ բարեփոխման հետ, ի՞նչ հարցերի եք ձգտում պատասխանել: (250-300 բառ)

Խնդրի նկարագրություն և հետազոտության հիմնավորում

Համառոտ նկարագրեք Ձեր առաջարկած ոլորտում տիրող իրավիճակը, գոյություն ունեցող հետազոտությունները, քաղաքականությունները, գրականությունը՝ մատնանշելով Ձեր նախագծի նախատեսվող հավելումն ու նորարարությունը ոլորտում: Ինչպիսի՞ ազդեցություն ունի խնդիրը այսօր Հայաստանի հանրության համար: Ովքե՞ր են ուղղակիորեն եւ անուղղակիորեն ներգրավված շահագրգիռ կողմերը, ինչպես նաև խնդրի վրա ազդող գործոններն ու թիրախները: Ներկայացրեք խնդրի բնույթն ու համատեքստը, ինչպես նաև Ձեր ուսումնասիրության արդյունքում ակնկալվող ներդրումը՝ խնդրի լուծման վերաբերյալ: (1000-1200 բառ)

Հետազոտական հարց/եր

<u>Հարցերի տեսքով</u>՝ ներկայացրեք Ձեր գլխավոր և ենթա-հետազոտական հարցերը:
Ի՞նչ հարցերի եք փորձում պատասխանել Ձեր հետազոտության օգնությամբ: (80-100 բառ)

Քաղաքականությանն առաջարկվող այլընտրանք/ներ և նախնական հիմնավորում

Ի պատասխան Ձեր հետազոտական հարցերի, ո՞րն է Ձեր նախընտրած, առաջարկած քաղաքականությունը: Ըստ նախնական հիմնավորման ինչո՞ւ եք կարծում, որ այն ավելի արդյունավետ կլինի: (350-400 բառ)

Մեթոդաբանություն

Հստակ նկարագրեք հետազոտության մեթոդաբանությունը: Մատնանշեք հնարավոր դժվարություններն ու դրանք հաղթահարելու նախատեսվող ուղիները: (300-350 բառ)

Արդյունքներ

Նկարագրեք հետազոտության արդյունքները՝ մշակված նյութերի տեսքով (օր.՝ քաղաքականության վերլուծության փաստաթուղթ (policy paper), համառոտագիր (policy brief), պաստառ (poster), գիտաժողովի նյութեր, տվյալների բազաներ, ուղեցույցներ, տեղեկատվական թերթիկներ, ինֆոգրաֆիկա, պրեզենտացիաներ, աուդիո կամ վիդեո նյութեր և այլն: (80-100 բառ)

Հետազոտության արդյունքների շուրջ ջատագովության ռազմավարություն

Ինչպե՞ս եք տեսնում Ձեր հետազոտության արդյունքների ազդեցությունը: Ի՞նչ ռեսուրսներ կամ գործիքներ պետք է օգտագործել հետազոտության ազդեցությունը առավելագույնի հասցնելու համար: Ներկայացրեք հետազոտության արդյունքների շուրջ ջատագովության ռազմավարությունը: Ի՞նչ ռիսկեր կարող են ծագել ջատագովության ռազմավարության իրագործման գործընթացում: (500-700 բառ)

Ժամանակացույց

Նշեք Ձեր նախագծի պլանավորած գործողություններն՝ ըստ դրանց իրականացման ժամանակի: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ նախագիծը պետք է իրականացվի <u>առավելագույնը 5 ամսիսների</u> ընթացքում: Հետազոտության մեկնարկը նախատեսվում է՝ **2018թ. նոյեմբերի 1-ը:**

Բյուջե

Ստորև աղյուսակի օրինակով ներկայացրեք բյուջեի բոլոր ծախսերը, որոնք կարող են ներառել դաշտային հետազոտությունների հետ կապված ծախսեր, հոնորարներ, տրանսպորտային ծախսեր, հետազոտության հրատարակման, ներկայացման, տարածման և այլ անհրաժեշտ ծախսեր: Առաջարկի բյուջեն չպետք է գերազանցի $3,000 ԱՄՆ դոլարը: Բյուջեն ներկայացնել ԱՄՆ դոլարային արժույթով:

	բյուջետային տող	*չափի միավոր*	*քանակ*	*միավորի արժեք ($)*	*ընդամենը ($)*
1.					
2.					
3.					
4.					
	Ընդամենը				